Հայ–Նախիջևանյան հերթական հանդիպումը

Մայիսի 14-ին, Արարատի և Սադարակի շրջանների սահմանագլխին տեղի ունեցավ հայ–նախիջևանյան հերթական հանդիպումը: Հայկական կողմը ներկայացնում էին խորհրդարանի առաջին փոխնախագահ Արա Սահակյանը, ԳԽ նախագահության անդամ Բագրատ Ասատրյանը, հանրապետության գլխավոր սահմանապահ կոմիսար, գնդապետ Գրիգոր Գրիգորյանը, իսկ նախիջևանյան կողմը՝ ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի նախագահ Հեյդար Ալիևը և նրա առաջին տեղակալ Անար Սաֆարովը: Ներկա էին զինվորականներ, սահմանակից շրջանների ղեկավարներ: Հանդիպումը, որի նպատակն էր հայ–նախիջևանյան սահմանում հաստատված հարաբերական խաղաղությունն առավել կայուն դարձնելու մեխանիզմների որոնումը, տեղի ունեցավ հենց ավտոճանապարհին, մի ավերված շինության մոտ, որը խաղաղ ժամանակներում պետավտոտեսչության պահակակետ էր եղել:

Քելբաջարի անկմանն ու Հայաստանի հանդեպ Թուրքիայի դիրքորոշման հստակեցմանը հաջորդեց իրադրության զգալի բարդացումը հայ–նախիջևանյան սահմանում: Նախիջևանում հայտնվեցին տանկեր, հրետա-

(Շարունակությունը 2-րդ էջում)

Հայ-Նախիջևանյան հերթական հանդիպումը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նային ինքնագնայ կայանքներ... Առանձին մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Վյաչեսլավ Պողոսյանի վկայությամբ, եթե Եղեգնաձորի հետ սահմանակից հատվածում ադրբեջանցիների ուժերը հազիվ հերիքում էին Խաչիկի և Արենիի դիմաց դիրքավորվելու, ապա այժմ նրանք բավական խիստ կերպով տարածվել են շրջանի սահմանի ողջ երկայնքով և զբաղված են ինժեներական զանազան կառույցների ստեղծմամբ:

Սահմանում լարվածությունն իր գագաթնակետին հասավ թերևս մայիսի 10-ին, երբ բավական ուժգին հրթիռաներետակոծման ենթարկվեց Խաչիկը: Հայկական ուժերը դիմեցին պատասխան գործողությունների, որոնց մասին Հեյդար Ալիևն ասաց բառացիորեն հետևյալը. «Ես մտածում էի, որ հայերը շնորհավորում էին իմ ծննդյան տարեդարձը: Արկերը պայթում էին Շարուրի կենտրոնում»:

Ըստ տարբեր աղբյուրներից ճշտված տեղեկությունների, այդ օրը սպանվեց ադրբեջանական բանակի 17 զինվոր և պայթեցվեց մի բավական մեծ զինապահեստ:

Սկզբում ենթադրվում էր, որ Նախիջևանի պատվիրակությունը գլխավորելու է Գերագույն Մեջլիսի փոխնախագահ Անար Սաֆարովը (ինչպես սովորաբար լինում էր), բայց վերջում պարզվեց, որ գալու է անձամբ Ալիևը: Թե՛ այս փաստը, և թե՛ հանդիպման ողջ ընթացքում ինքնավար հանրապետության ղեկավարի պահվածքն ու խոսքերը վկայում էին այն մասին, որ Նախիջևանի ղեկավարությունը փորձում էր փարատել վերջին դեպքերի պատճառով առաջացած մտավախությունն իր որդեգրած դիրքորոշման հնարավոր փոփոխության վերաբերյալ:

Միմյանց շահերի հակասող հեռանկարային կամ ընթացիկ նպատակների բացակայության երկուստեք հավաստիացումներից հետո Հեյդար Ալիևը տեղեկացրեց հայկական պատվիրակությանը, որ Քելբաջարի անկումից հետո, երբ ինքնավար հանրապետությունում սկսեցին հնչել հայ-նախիջևանյան սահմանում խաղաղությանը վերջ տալու կոչեր, նա հանդես գալով տեղական հեռուստատեսությամբ, հայտարարել է, որ քանիդեռ ինքը Գերագույն Մեջլիսի նախագահն է, անկախ նրանից, թե ինչպիսին կլինի դեպքերի հետագա զարգացումը, Նախիջևանը չի ներքաշվի հայ-ադրբեջանական հակամարտության մեջ:

Խոսակցություն ծավալվեց նաև երկաթուղու և հաղորդակցության այլ միջոցների աշխատանքների վերսկսման ուղիների վերաբերյալ, ափսոսանք հայտնվեց, որ սահմանամերձ առևտրի կազմակերպման խնդիրն առայժմ խոսքից գործի չի վերածվում:

Որոշվեց երկու կողմերի սահմանների պաշտպանությունն իրականացնող զորքերի ընդհանուր հրամանատարների միջև ստեղծել ուղիղ կապ և առանց միջնորդների միանգամից լուծել առաջացող բոլոր հարցերը:

Ընդունվեց համատեղ կոմյունիկե, ուր կարնորվեցին հաստատված հարաբերական խաղաղությունն առավել կայուն դարձնելու, երկաթուղու և հաղորդակցության այլ միջոցների աշխատանքների վերսկսման ուղիների համատեղ որոնման և գյուղատնտեսական աշխատանքների կատարման անվտանգության ապահովման անհրաժեշտությունը:

Տիգրան Դևրիկյան